

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԿԱՄՔ, ՀԱԲԱՔԱԿԱՆ ՄԻՏՔ ԵՒ ՈԳԻ

Posted on December 20, 2011 by Keghart



Category: [Opinions](#)



✘ **Դոկ. Սուրեն Սերայտարեանի խօսքը արտասանուած Սելրի մէջ կայացած Արեւմտահայոց Երրորդ Համագումարի աւարտին (10 Դեկտեմբեր 2011): **Խմբ.****

Սիրելի Հայրենակիցներ,

Թոյլ տուէք մեզի բոլորիս շնորհաւորել Արեւմտահայերու Երրորդ Համագումարի բարեյաջող եւ արդիւնաբեր աւարտի կապակցութեամբ:

Համագումարը ցոյց տուաւ որ եթէ կայ յստակ նպատակ, բարի կամք եւ իրատես հաւատք, ապա հայերը կրնան համագործակցիլ, համախոհութիւն եւ միասնականութիւն ապահովել:

Ինչպէս պատգամած է մեզի մեր մեծ բանաստեղծը, մեր միակ փրկութիւնը մեր հաւաքական ուժի մէջ է:

✘ **Դոկ. Սուրեն Սերայտարեանի խօսքը արտասանուած Սելրի մէջ կայացած Արեւմտահայոց Երրորդ Համագումարի աւարտին (10 Դեկտեմբեր 2011): **Խմբ.****

Սիրելի Հայրենակիցներ,

Թոյլ տուէք մեզի բոլորիս շնորհաւորել Արեւմտահայերու Երրորդ Համագումարի բարեյաջող եւ արդիւնաբեր աւարտի կապակցութեամբ:

Համագումարը ցոյց տուաւ որ եթէ կայ յստակ նպատակ, բարի կամք եւ իրատես հաւատք, ապա հայերը կրնան համագործակցիլ, համախոհութիւն եւ միասնականութիւն ապահովել:

Ինչպէս պատգամած է մեզի մեր մեծ բանաստեղծը, մեր միակ փրկութիւնը մեր հաւաքական ուժի մէջ է:

Մեր պարտութիւններու եւ մեր կորուստներու հիմնական պատճառը պէտք է փնտռել ոչ թէ թշնամիներու վայրագութեան, ոչ թէ բարեկամներու դաւաճանութեան, այլ մեր միասնականութեան ինչպէս նաեւ անհրաժեշտ իրատեսութեան բացակայութեան մէջ:

Մեզի պատմութիւնը կրկին հնարաւորութիւն կու տայ յաղթական դուրս գալու համար:

Հայաստանը անկախացած է, Արցախը ազատագրուած, *de facto* միացումը իրականացած է:

Տարագիր, պատսպարեալ արեւմտահայութեան ժառանգները կարող, կայուն, զարգացած քաղաքացիներ են մեծ մասամբ յառաջադէմ երկիրներու մէջ, կը ներկայացնեն հզոր ներուժ, մայր հայրենիքի հետ միասին յուսալի եւ ապահով ապագայ կերտելու համայն հայութեան համար:

Եթէ հայութիւնը միասնական կամք, հաւաքական միտք, հաւաքական ոգի ապահովէ,

հաւատացած ենք, 21-րդ դարը պիտի նշուի որպէս հայութեան դարը:

